

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՔԱԳՈՐԾՆԵՐԻ  
ԵՎ ՄԵՏԱԼՈՒՐԳՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅՈՒՆ



СОЮЗ  
ГОРНЯКОВ  
И МЕТАЛЛУРГОВ  
АРМЕНИИ

## THE UNION OF MINERS AND METALLURGISTS OF ARMENIA

ՀՀ, ք. Երևան, Մ. Սարյանի 40/64

RA, Yerevan, av. Saryan 40/64

РА, г. Ереван, ул. М.Саряна, 40/64

Հեռ. (+374) 462229, 094 49 03 46

Tel. (+374) 462229, 094 49 03 46

Тел. (+374) 462229, 094 49 03 46

Ք. Երևան

22, 06, 2018թ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՊԱՐՈՆ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն փոխվարչապետ

Կասկածից վեր է, որ հանքարդյունահանման ոլորտում գործունեությունը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հանրային լայն վերահսկողության մեխանիզմների և տեղեկատվական պատշաճ թափանցիկության ապահովմամբ:

Միությունը ողջունում է այս ուղղությամբ ՀՀ կառավարության նախաձեռնությունները և պատրաստակամ է իր անդամների մասնագիտական ներուժով աջակցել դրանց: Միաժամանակ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքին, որ ոլորտի ձեռնարկություններում կան այնպիսի օբյեկտներ, որոնց վերաբերյալ տեղեկատվության շրջանառությունն անվտանգության նկատառումներով սահմանափակված է ՀՀ օրենսդրությամբ:

Հարկ է հաշվի առնել նաև, որ հանքարդյունաբերող ընկերությունները որոշ գործընթացներում կիրառում են տեխնոլոգիաներ, որոնք ապահովում են մրցակցային առավելություններ և պարունակում են առևտրային գաղտնիք: Ելնելով վերոհիշյալից, գտնում ենք, որ ոլորտի ձեռնարկություններում ստուգումների գործընթացում երրորդ անձանց ներգրավվածությունը կարող է առաջացնել խնդիրներ:

Հարգարժան պարոն փոխվարչապետ

Համոզված ենք, որ Միության ներկայացուցիչներին մասնակից դարձնելով ստուգումների կազմակերպման վերաբերյալ խնդիրների քննարկումներին, անպայման կգտնվեն առավել հավասարակշռված և արդյունավետ լուծումներ: Ուստի խնդրում ենք, մինչև ստուգումների մեկնարկը կազմակերպել հանդիպում Միության ներկայացուցիչների հետ:

Կանխավ շնորհակալ ենք:

Հարգանքով

Միության տնօրեն

Վ. Կիրակոսյան

